
**ՀԱՅԵՐԵՆԻ ՀԱՉՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՂԱԽՈՍԱԿԱՆ
ՆՈՐՄԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ**

ՎԱՐԴԱՆՅԱՆ Ն. Հ.

Լեզվի նորմավորումը, կանոնարկումը լեզվում գործածվող կանոնների գիտակցված կարգավորումն է, մշակումը, միօրինակացումը՝ բառարանների, ուղեցույցների, տեղեկատուների, քերականական ձեռնարկների, դասագրքերի հրատարակման միջոցով:

Լեզվական նորմն ուսումնասիրության առարկա է դարձել գրական լեզվի և լեզվի մյուս գոյաձևերի քննության առնչությամբ: Գրական լեզվի նորմավորումը կանոնակարգվում են լեզվի գործառական բոլոր ոլորտները: Այն գիտակցված միջամտություն է, որով կանոնավորվում է նաև հանրության լեզվագործածությունը, հաղորդակցությունը: Լեզվի նորմավորման հիմքում ընկած են այնպիսի սկզբունքներ, ինչպիսիք են «արդյունավետությունը, գիտականությունը և տրամաբանությունը, լեզվական միջոցների խնայողությունը, պարզությունը, մատչելիությունն ու հասկանալիությունը»¹:

Լեզվական նորմերն ապահովում են գրական տարբերակի անթերի իմացությունը, ճիշտ և գեղեցիկ խոսելն ու գրելը, գրագետ հաղորդակցվելը: Լեզվի գրական նորմերից կատարվող յուրաքանչյուր շեղում համարվում է սխալ և անընդունելի:

Ըստ «Լեզվաբանական բառարանի»՝ «լեզվական նորմաների գործողության ասպարեզը նկատի ունենալով տարբերում են՝ քերականական նորմա, բառային նորմա, ոճական նորմա, ուղղախոսական նորմա, հնչյունական նորմա և այլն»²:

Կարելի է ասել, որ լեզվական, մասնավորապես գրական նորմն արտացոլված է լեզվի կառուցվածքային բոլոր ոլորտներում (ուղղագրություն, ուղղախոսություն, հնչյունաբանություն, բառագիտություն, բառակազմություն, քերականություն)՝ անկախ այդ լեզուն կրողի կամքից և գիտակցությունից: Ըստ էության, նրա գոյությունը չի գիտակցվում, բայց այն մշտապես առկա է թե՛ գրական լեզվում, թե՛ բարբառներում: Իսկ ոճական նորմը արտացոլում է իրադրական և գործառական բոլոր ոճերի համակարգայնությունը՝ պատկերավորության և արտահայտչականության առումով:

Վերոնշյալի հիման վրա կարելի է եզրակացնել, որ գրական նորմը ներառում է գրական լեզվի բոլոր իրողությունները և համապատասխանաբար կարող է լինել հնչյունափոխական նորմ, ուղղագրական նորմ, ուղղախոսական նորմ,

¹ Պողոսյան Պ., *Խոսքի մշակույթ և ոճաբանության հիմունքներ*, գիրք 1, Ե., 1990, էջ 68:

² Պետրոսյան Ս., Գալստյան Ս., Ղաթազուլյան Թ., *Լեզվաբանական բառարան*, Ե., 1975, էջ 127:

բառային նորմ, բառակազմական, այդ թվում՝ տերմինաբանական նորմ, քերականական նորմ, կետադրական նորմ, ոճական նորմ:

Գրական հայերենի ուղղախոսությունը վերաբերող խնդիրները վաղուց ի վեր մտահոգել են մեր լեզվաբաններին, որոնք թեև այդ խնդիրն առանձնակի ուսումնասիրության առարկա չեն դարձրել, բայց իրենց տարբեր աշխատություններում և հասկապես ձեռնարկներում, դասագրքերում ներկայացրել են հայերեն գրական լեզվի մի շարք կանոններ կամ տվել են ուղղախոսական մասնակի ցուցումներ:

Գ. Սևակը ուղղախոսական նորմերի պահպանման և զարգացման գործում ամենակարևոր և գլխավոր դերը համարել է թատրոնը: Ավելացնենք նաև, որ արդի շրջանում էլ ավելի մեծ նշանակություն ունեն հեռուստատեսությունը, ռադիոն. հենց սրանց միջոցով են պահպանվում մեր լեզվի արտասանական ավանդույթները, և մշակվում ու կատարելագործվում արտասանական նոր տեսակներ:

Արտասանական նորմերն առաջանում են խոսակցական լեզվում և մշակվում պատմականորեն: «Գոյություն ունեն ուղղախոսության նեղ և լայն ըմբռնումներ: Ըստ նեղ ըմբռնման՝ ուղղախոսություն ասելով հասկանում են բանավոր խոսքի արտասանական կանոնների ամբողջությունը, առանց նկատի ունենալու նույնիսկ շեշտադրությունը: Լայն ըմբռնմամբ ուղղախոսության սահմանների մեջ են ներառվում արտասանության և շեշտադրության նորմաներից բացի նաև քերականական որոշ ձևերի կազմության կանոններ»³: Ինչպես յուրաքանչյուր նորմ, այնպես էլ ուղղախոսական նորմերը համապատասխանում են լեզվի զարգացման տվյալ փուլին և ապահովում են բանավոր խոսքում բառերի գրական նորմավորված, ճիշտ արտասանությունը: «Արտասանության փոփոխության պատճառ են հանդիսանում հնչյունների փոխադրեցության զանազան երևույթներ՝ առնմանումը, տարնմանումը, դրափոխությունը, ինչպես և համաբանությունը, հնչյունների անկումը և հավելումը, բարբառների և այլ լեզուների ազդեցությունը, պատմական հնչյունափոխությունը և այլն»⁴: Ուղղախոսական նորմերը պետք է յուրացնի և ճիշտ կիրառի յուրաքանչյուր գրագետ մարդ:

Ուղղախոսությունը ուղիղ կամ ճիշտ խոսելու, ինչպես նաև գրվածք ճիշտ կարդալու կանոնների ամբողջություն է⁵: Եթե խոսքը, ըստ իրադրության և գործառության, բաժանվում է տարբեր ոճերի՝ գիտական, պաշտոնական, հրապարակախոսական, գեղարվեստական և առօրյա-խոսակցական, ապա

³ Ղաբազույան Թ., Ժամանակակից հայերենի ուղղախոսությունը, Ե., 1974, էջ 8:

⁴ Նույն տեղում, էջ 47:

⁵ Ավետիսյան Յու., Զաքարյան Հ., Հնչյունաբանություն, ուղղախոսություն, ուղղագրություն, Ե., 2007, էջ 25:

ըստ ուղղախոսական նորմերի կիրառության՝ առանձնացնում են արտասանական երկու ոճ՝ բարձր և խոսակցական:

Բարձր ոճում արտասանությունը մեծ մասամբ գիտակցական է. խոսողը հսկողության տակ է պահում իր արտասանությունը՝ ջանալով բառերն արտասանել այնպես, ինչպես պետք է կամ համարվում է ճիշտ: Սովորական խոսակցության ժամանակ խոսողն իրեն թույլ է տալիս որոշ ազատություն: Այստեղ է, որ բարենպաստ պայմաններ են ստեղծվում հնչյունական սղումների և զանազան ազդեցությունների համար⁶: Ուղղախոսական նորմերի համակարգի մշակման գործընթացի վրա որոշակի ազդեցություն են ունեցել ժողովրդախոսակցական լեզվի արտասանական որոշ ձևեր:

Ինչը կարող է սխալ արտասանության պատճառ դառնալ, և որոնք են այդ սխալներից զերծ մնալու կարևոր կանոնները:

Ուղղախոսական նորմերի սխալ կիրառությունը կարող է պատճառ դառնալ խոսքի սխալ ընկալման: Ուղղախոսության կանոնները վերաբերում են բառերում հնչյունների և հնչյունակապակցությունների ճիշտ արտասանությանը, ինչպես նաև ճիշտ հնչերանգին ու շեշտին:

Ուղղախոսական նորմերի կիրառությունն էական դեր է խաղում հրապարակային, բարձր ոճերում, ինչպես նաև հեռուստատեսությունում ու ռադիոյում:

Ինչպես նշեցինք, ուղղախոսության յուրաքանչյուր կանոն կապված է հնչյունի հետ, նրա տեսակից, բառի մեջ գրաված դիրքից և արտասանության տոնից: Այստեղից էլ կարելի է ենթադրել, որ ուղղախոսական նորմերն ուղղակիորեն կապված են հնչյունների և հնչերանգի հետ, և մեր խնդիրն է անդրադառնալ յուրաքանչյուր հնչյունի արտասանական ձևի և տոնի առանձնահատկությանը:

ա) Ձայնավորների արտասանությունը

Հնչյունները կազմված են կամ ձայնից ու աղմուկից, կամ միայն ձայնից, կամ միայն աղմուկից: Այն հնչյունները, որոնք կազմված են միայն ձայնից, կոչվում են ձայնավորներ:

Ձայնավորները «մաքուր» հնչյուններ են, առանց աղմուկի, առանց ռնգայնացման: Նրանց արտասանական երկարությունը և կարճությունը խոսքին հաղորդում են զանազան արտահայտչական և հուզական երանգներ:

Ձայնավորները մեծ դեր են կատարում լեզվում: Առանց ձայնավորի բառ չի կազմվում, բայց մեկ ձայնավորով բառ կազմվում է, ինչպես օրինակ՝ շաղկապները, ձայնարկությունները: Գիտենք նաև, որ սրանք շեշտակի միավորներ են, և միայն ձայնավորով է վանկ կազմվում:

⁶ Ղարազույան Թ., նշվ. աշխ., էջ 81:

Հայերենն ունի վեց ձայնավոր, որոնք գրության մեջ արտահայտվում են ութ ձևով՝ -ա, -ու, -ի, -օ (-ո), -է (-ե), -ը: Ձայնավորներից ավելի բարձր են արտասանվում -ա-ն, -ի-ն, -է-ն, իսկ -օ-ն և -ու-ն թույլ են արտասանվում: Ամենակարճ արտասանվող ձայնավորը -ը-ն է:

Անդրադառնանք յուրաքանչյուր հնչյունի արտասանական առանձնահատկություններին առանձին-առանձին:

• -Ա-ն և -ու-ն բոլոր դիրքերում՝ բառասկզբում, բառամիջում և բառավերջում, բաղաձայնների կամ այլ ձայնավորների զուգորդությամբ ունեն միևնույն արտասանությունը:

• -Ի-ն ամենից փակ (նեղ) ձայնավորն է:

• Բառավերջում և բաղաձայններից առաջ ունի միևնույն արտասանությունը:

• Ձայնավորներից առաջ -ի-ն մի շարք դեպքերում փոխում է իր որակը՝ հնչելով -յ. օրինակ՝ կրիա (կրյա), հեքիաթ (հեքյաթ), Մարիամ (Մարյամ):

Թե ինչպե՞ս է արտասանվում ամեն մի ձայնավոր հնչյունաշղթայում, կախված է հնչյունի տեսակից և դիրքից: Հայերենի ձայնավորներից -է-ն (ե-յէ) և -օ-ն (ո-վօ) ունեն գրության և արտասանության երկու ձև: Եվ հենց այս ձայնավորներն են, որ շատ հաճախ դառնում են սխալ արտասանության պատճառ: Սրանց վերաբերող նորմերը հայերենում մշակվել են հետևյալ կերպ.

• -է հնչույթը արտահայտվում է երկու ձևով՝ -է և -ե (յէ),

• -է տառը բոլոր դիրքերում՝ բառասկզբում, բառամիջում և բառավերջում, արտասանվում է -է: Վերջին երկու դիրքերում -է է գրվում, քանի որ բարդ բառի արմատը -է տառով է սկսվում,

• մյուս դեպքերում -է հնչույթը գրվում է -ե, բայց տարբեր դիրքերում կարդացվում է -յէ կամ -է,

• բառասկզբում -ե-ն արտասանվում է -է օժանդակ բայի բայաձևերում՝ եւ, ես, ենք, եք, են,

• երբ -ե-ն հաջորդում է բաղաձայնի, կարդացվում է -է՝ ան(է)րկբա, նրբ(է)րշիկ, արտ(է)րկիր,

• սրանց չեն վերաբերում հապավումները, եթե հապավումներում -է-ն հաջորդում է բաղաձայնի, ապա արտասանվում է -յէ:

• այն դեպքում երբ -ե-ն հաջորդում է ձայնավորի, կարդացվում է -յէ՝ ամենա(յէ)րկար, կիսա(յէ)գրափակիչ, կապտա(յէ)րիզ,

• -ե տառը ձայնավորից առաջ որոշ դեպքերում արտասանվում է -յ՝ հր(յ)ա, ամ(յ)ոբա:

Մեր համոզմամբ, լեզվում միտում է նկատվում այս կանոնի վերացման, քանի որ այսօր շատ հաճախ լսելի է սույն կանոնին ենթարկվող բառերի՝ գրության նմանողությամբ արտասանություն, այսինքն՝ հրեա, ամեոբա և այլն:

• Փոխառյալ բառերում ռուսերենի նմանողությամբ -ե-ն հնչում է -ի, որը ուղղախոսական նորմի խախտում է համարվում. օրինակ՝ պենիցիլին-պ(ի)նիցիլին, ինտելիգենտ-ինտ(ի)լիգենտ, դեզինֆեկցիա-դ(ի)զինֆեկցիա:

• -Օ հնչույթը հայերենում արտահայտվում է երկու տառով՝ -օ և -ո (վօ),

• -օ տառը բոլոր դիրքերում արտասանվում է -օ,

• -ո տառը բառասկզբում կարդացվում է -վօ, բացառությամբ ով, ովքեր բառերի,

• -ո-ն բառամիջում արտասանվում է -վօ, երբ -ո-ով սկսվող արմատին նախորդում է ձայնավոր. օրինակ՝ նրբա(վօ)ճ, հոգե(վօ)րդի, ամենա(վօ)րակյալ,

• մյուս դեպքերում, երբ -ո-ն հաջորդում է բաղաձայնին, արտասանվում է -օ. բարձր(օ)րակ, հայ(օ)րդի, պարզ(օ)րոշ և այլն:

Պետք է նշել, որ եթերում հաճախ ենք հանդիպում այս կանոնի խախտման դեպքերի, մասնավորապես սխալ են արտասանվում ծափ(վօ)ղջյուններ, հոգե(օ)րդի (Շանթ հ/ը, 2010 թ. հունվարի 31, ժամը՝ 20:30):

• «...կա ևս մի դեպք, երբ -ո-ով և -ե-ով սկսվող այն բառերը, որոնք ան-նախաձանցով են, առաջացնում են որոշ տարակարծություն. օրինակ, ըստ որոշ լեզվաբանների, եթե ան նախաձանցին հաջորդող բաղադրիչներն անկախ կիրառություն ունեն, որոշակիորեն գիտակցվում են, ունեն որևէ կոնկրետ իմաստ և ներկայացնում են ան- նախաձանցով կազմված բառի ուղղակի հակադրությունը, ապա -ե-ն և -ո-ն կարդացվում են -յէ և -վօ. օրինակ՝ ենթակա - ան(յէ)նթակա, երկյուղ - ան(յէ)րկյուղ»⁷:

Սակայն, մեր համոզմամբ, ընդհանուր կանոնից արհեստականորեն շեղումներ պետք չէ անել: Վերոնշյալ բառերը, անկախ այն բանից ան-նախաձանց ստանալուց առաջ անկախ կիրառություն ունեն, թե ոչ, ցանկացած նախաձանց ստանալիս պիտի ենթարկվեն ընդհանուր կանոնին, այսինքն՝ արտասանվեն ան(է)նթակա, ան(է)րկյուղ և այլն:

Նշենք նաև, որ որոշ փոխառյալ բառերում -ո-ն արտասանում են -ը, որն ուղղախոսական նորմի խախտում է. օրինակ՝ օպերատ(ը)ր, տրակտ(ը)ր (Շանթ հ/ը, փետրվարի 14, ժամը 11:15), Վաշինգթ(ը)ն (Երկիր Մեդիա, ապրիլի 24, ժամը 12:50):

Հայերենի ուղղախոսական նորմի խախտում է, երբ փոխառյալ բառերում -ո հնչյունի փոխարեն հնչում է -ա արտասանություն. օրինակ՝ դ(ա)ցենտ (TV5, հունիսի 12, ժամը 17:10), կ(ա)մպ(ա)զիտ(ը)ր (Դար 21, ապրիլի 25, ժամը 12:45), Մ(ա)սկվա (Արմենիա հ/ը, 2010 թ. դեկտեմբերի 8, ժամը 22:25):

Պետք է նշել, որ վերջին երկու խախտումները ռուսերենի ազդեցության հետևանք են և, դժբախտաբար, շատ տարածված են խոսքում: Տեքստի առաջնական կոմիտեն տարբեր որոշումներով («Հայերենին անցած օտար

⁷ Ղաթագույան Թ., նշվ. աշխ., էջ 94:

բառերում օ(ո) ձայնավորի գրության և արտասանության մասին») փորձել է կարգավորել, կանոնարկել այս կետը և գրության ու արտասանության միասնական կանոնի ենթարկելու նպատակով որոշում է կայացրել Մոսկվա, պրոֆեսոր և նման բառերի օրինակով ո գրել և օ կարդալ նաև Նապոլեոն, Վիլսոն, Տոլստոյ, Ռոստով, Խարկով, մոնտյոր, ռեկտոր, մոնիտոր, կոնֆետ, միկրոֆոն և այլ բառերում⁸:

-Ը-ն ունի մի շարք ուղղախոսական և ուղղագրական, ինչպես նաև քերականական առանձնահատուկ նորմեր, որոնցով տարբերվում է մյուս ձայնավորներից:

- Եթե բոլոր ձայնավորներով կարող ենք միավանկ բառ կազմել, ապա -ը-ով միավանկ բառ չի կազմվում, բացառությամբ ըստ և ընդ նախդիրների:

- Եթե բոլոր ձայնավորները կարող են շեշտ կրել, ապա -ը-ն շեշտ չի կրում:

- Եթե այլ հնչյուններն արտասանվում են այն դեպքում, երբ գրված են, ապա -ը-ն կարող է հնչել նաև այն դեպքում, երբ բառում այն չի գրվում:

- -Ը-ն չի կարող նախորդել մեկ այլ ձայնավորի, կարող է նախորդել միայն -ն, -ւ, -դ և -ս հնչյուններին:

- Քանի որ հայերենը չի սիրում բաղաձայնների կուտակում, ապա դրանց միջև հնչում է -ը-ն, սակայն կան բառեր, որոնց արտասանության ժամանակ -ը-ի սխալ դիրքում արտասանելը բերում է սխալ ուղղախոսության, օրինակ՝ համալսարան – համալ(ը)սարան:

- -Ը-ն հանդես է գալիս բառակզրում, բառամիջում, երբ արմատի սկզբնատառ է, և բառավերջում՝ որպես քերականական մասնիկ:

- -Ը-ն որոշիչ հոդ է կազմում այն բառերի հետ, որոնք ավարտվում են բաղաձայնով, իսկ ձայնավորով ավարտվող բառերում որպես որոշիչ հոդ հանդես է գալիս -ն հնչույթը: Բարեհնչության համար, երբ -ը որոշյալ հոդով կազմված բառին հաջորդում է ձայնավորով սկսվող բառ, -ը-ին փոխարինում է -ն-ն:

- -Ը-ն շատ կարևոր դեր ունի բանաստեղծական չափածո խոսքում բարեհնչության և տողերի հանգավորման համար:

Այսպիսով՝ «-ը-ն հայերենում կատարում է երեք գործառույթ՝ որպես չեզոք ձայնավոր, որի հետ հերթագայում են մյուս ձայնավորները, որպես ձայնավորական հենարան բաղաձայնական կուտակումներում և որպես ինքնուրույն հնչույթ (հիմնականում որոշիչ հոդի դերում)»⁹:

բ) Բաղաձայնների արտասանությունը

Այն հնչյունները, որոնք արտաբերվում են արտասանական ապարատում ստեղծված նեղվածքի և փակվածքի հաղթահարմամբ, կոչվում են

⁸ Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու. 1956-2006, Ե., 2006, էջ 186, 195:

⁹ Խաչատրյան Ա., Ժամանակակից հայերենի հնչույթաբանություն, Ե., 1988, էջ 69:

բաղաձայններ: Մրանք կազմված են աղմուկից կամ ձայնից ու աղմուկից: Բաղաձայնները երեսունն են և բաժանվում են խմբերի՝ ըստ ձայնի և աղմուկի պարունակության, արտաբերման եղանակի ու տեղի, ինչպես նաև ըստ կազմության: Մրանցից յուրաքանչյուրն առանձին կարևորություն ունի ինչպես ուղղագրության, այնպես էլ ուղղախոսության տեսակետից, այդ պատճառով էլ մենք կանդրադառնանք դրանցից յուրաքանչյուրին առանձին-առանձին:

Բաղաձայնները կապված են միմյանց հետ որոշ հատկանիշներով, և արտասանության ժամանակ հիմք ընդունելով այդ կապը՝ առաջացնում են շփոթություն: Կան բաղաձայններ էլ, որոնք առանձին ներկայացնում են և՛ ուղղագրական, և՛ ուղղախոսական դժվարություններ:

Յ

- -Յ-ն հայերենում հանդես է գալիս որպես ձայնակապ. «Ձայնակապի առաջացումը պայմանավորված է նրանով, որ արտաբերա-կան օրգանները ձգտում են մի հնչյունից մյուսին անցնել ամենակարճ ճանապարհով, և այդ պրոցեսում առաջանում է անցումային հնչյուն...»¹⁰: «Երկու և ավելի կից տարավանկ ձայնավորների արտասանության ժամանակ առաջանում է արտասանության ընդհատում, օդի ազատ հոսք: Արտասանական այս դժվարությունը լեզվաբանության մեջ ստացել է **հորանջ** անվանումը: Հորանջը լեզուներում վերացվում է զանազան միջոցներով՝ առաջին հերթին **ձայնակապի**, ապա տարավանկ ձայնավորները **երկբարբառի** կամ **երկհնչյունի** վերածվելու, մի ձայնավորի մեջ երկու **ձայնավորների_ծուլման**, բառավերջի ձայնավորի և հաջորդող բառի սկզբնաձայնավորի **ծուլման** ճանապարհով և այլն»:¹¹

- Ինչպես -ը-ն, այնպես էլ -յ-ն կարող է որոշ դեպքերում գրվել ու արտասանվել և որոշ դեպքերում չգրվել, բայց արտասանվել:

- Երբ ձայնավորով վերջացող բառին ավելանում է ձայնավորով սկսվող վերջավորություն, ապա երկու ձայնավորների միջև լսվում է -յ ձայնակապը, օրինակ՝ գաթա-յի, գնա-յի և այլն, եթե բառավերջի ձայնավորը վերջավորության ավելացմամբ չի սղվում կամ հնչյունափոխվում:

- -Յ ձայնակապը չի գրվում, բայց արտասանվում է -է-ից հետո. օրինակ՝ է(յ)ական, է(յ)ին, է(յ)ինք և այլն:

- -Ի-ից և -ու-ից հետո նույնպես լսվում է -յ հնչյունը. -յ-ի հնչեղությունը տարբեր ձայնավորների ուղեկցությամբ հնչում է տարբեր ուժգնությամբ:

- -Ա-ից և -ո-ից հետո անպայման գրվում և արտասանվում է -յ:

- Եթե ձայնավորով վերջացող դերբային կամ բառին հաջորդում են օժանդակ բայաձևերի ներկա ժամանակաձևերը, ապա դրանց միջև լսվում է -յ-ն. օրինակ՝

¹⁰ Ղարազուլյան Թ., նշվ. աշխ., էջ 121:

¹¹ Նույն տեղում, էջ 120:

բերելու (-յ) է, բերելու (-յ) են, իսկ ահա օժանդակ բայաձևերի անցյալ ժամանակաձևերում -յ կիսաձայնը հնչում է, բայց չի գրվում -է-ից հետո՝ է(-յ)ի, է(-յ)իր և այլն:

- Եթե շեշտված ժխտական օժանդակ ձևերը ձայնավորով սկսվող բառից առաջ են, ապա այստեղ չի գործում վերը նշված կանոնը. օրինակ՝ չի օգնում, չի արտասանում:

- Հայերենում երկհնչյունները կազմվում են -յ+ձայնավոր և ձայնավոր+յ հնչյունական գույգերի միջոցով:

Հ

- -Հ-ն շունչ է, որը կարող է հեշտությամբ ավելանալ կամ ընկնել որոշ դիրքերում, սակայն այն չարտասանելը ուղղախոսական նորմի խախտում է: Ժամանակակից ՁԼՄ-ով հաճախ է հնչում նախագահ բառն առանց -հ-ի արտասանության /նախագա Սերժ Սարգսյանը ... (Արմենիա հ/ր, ապրիլի 14, ժամը 12:05), ԼՂՀ նախագահ ... (Շանթ հ/ր, նոյեմբեր 20, ժամը 20:25):

- -Հ-ն -ր-ից հետո թույլ է արտասանվում, բայց գրական արտասանության ժամանակ պարտադիր է, ինչը կրկին մեր հաղորդավարները հաճախ մոռանում են արտաբերել: Օրինակ՝ հաճախ են սխալ արտասանվում շնորհակալություն, խորհրդարան, խորհրդատու, աշխարհ և այլ բառեր:

- -Հ-ի անկում հանդիպում ենք նաև կապակցություններում, օրինակ՝ երկուստ ձայնասկավառակ (TV5, մարտի 21, ժամը 11:25):

- -Հ-ն մյուս հնչյունների պես հնչում է, երբ բառասկզբում կամ բառամիջում է, եթե արմատի սկզբնատառ է:

- Բոլոր դեպքերում -հ-ի հնչելն ընդունելի է գրական լեզվի համար, այն երբեմն հնչում է թույլ, երբեմն ուժեղ:

Մյուս բաղաձայնները եռաշարք և երկշարք կազմող հնչյուններն են, որոնք գրության և արտասանության մեջ փոխարինում են միմյանց, այսինքն՝ գրվում է մեկ հնչյուն, արտասանվում որպես մեկ այլ հնչյուն: Դրանք են՝ բ-պ-փ, գ-կ-ք, դ-տ-ք, ձ-ծ-ց, ջ-ճ-չ, զ-ս, ժ-շ, դ-խ, վ-ֆ, ր-ռ, մ-ն: Ձայնավորներից և -ր, -մ, -ն, -դ հնչյուններից հետո -բ, -գ, -դ, -ձ, -ջ բաղաձայնները որոշ դեպքերում արտասանվում են -փ, -թ, -ք, -ց, -ճ:¹²

1) Բ-Պ-Փ

-Բ-ն -փ է կարդացվում հետևյալ դիրքերում.

- երբ -բ-ն հաջորդում է ձայնավորին, օրինակ՝ շաբ(փ)աթ,
- երբ հաջորդում է -ր և -մ բաղաձայններին, օրինակ՝ համբ(փ)ույր:

-Բ-ն արտասանվում է -պ.

- -դը հնչյունակապակցությունը արտասանվում է -խպ. օրինակ՝ աղբ-ա(խպ), եղբայր-ե(խպ)այր,

¹² Սուքիասյան Ա., Ժամանակակից հայոց լեզու, Ե., 1999, էջ 62:

• մնացած դեպքերում -բ-ն հնչում է -բ, հատկապես նոր և նորագույն փոխառություններում:

2) Գ-Կ-Ք

-գ-ն կարդացվում է -ք հետևյալ դիրքերում

- երբ -գ-ն հաջորդում է ձայնավորին. օրինակ՝ ավագ- ավա(ք), ճրագ-ճրա(ք),
- երբ -գ-ն հաջորդում է -ր-ին. օրինակ՝ միրգ-միր(ք), թարգմանիչ-թար(ք)մանիչ,
- երբ -գ-ին նախորդում է -ն-ն. օրինակ՝ անգամ-ան(ք)ամ,
- գ-ն արտասանվում է -կ.
- -դ-ից հետո գրվող -գ-ն արտասանվում է -կ՝ շաղգամ- շաղ(կ)ամ,
- մնացած դեպքերում -գ-ն հնչում է -գ՝ գագաթ, փափագ:

3) Դ-Տ-Թ

-Դ-ն արտասանվում է -թ հետևյալ դիրքերում.

- երբ գրվում է ձայնավորից հետո. օրինակ՝ օդ- օ(թ), դդում- դ(թ)ում, սակայն հոդված, բադ, հոդ, եղեմ, զինադադար, Սեդրակ բառերում պահպանում է գրության համապատասխան արտասանությունը,

- -հ ձայնորդից հետո. օրինակ՝ զարդ-զար(թ), արդար- ար(թ)ար,
- երկակի արտասանություն ունի բառավերջի -րդ տառակապակցությունը՝ կախարդ, երիտասարդ, խորհուրդ, թակարդ, մնացորդ,
- -ն ձայնորդից հետո՝ անդամ- ան(թ)ամ, խնդիր-խն(թ)իր,
- երբ բառը կազմվում է ընդ նախդիրով՝ ընդունել-ըն(թ)ունել, ընդունակ-ըն(թ)ունակ,

-դ-ն հնչում է -տ.

- երբ գրվում է -դ-ից առաջ՝ խեղդել- խե(խ)տել,
- -յ-ից հետո. օրինակ՝ այդքան- այ(տ)քան, այդպես- այ(տ)պես,
- -դ-ն ռուսերենի ազդեցությամբ հաճախ ԶԼՄ-ով արտասանում են -ձ, որն ուղղախոսական նորմի խախտում է, օրինակներ՝ ծնն(ձ)յան (Երկիր Մեդիա հ/ը, մարտի 6, ժամը 15:25, Շանթ հ/ը, մարտի 2, ժամը 11:10), Մե(ձ)իա TV ընկերությանը (Շանթ հ/ը, մարտի 22, ժամը 10:5), (ձ)ինամիկ (մարտի 14, ժամը 23:50), նախածնն(ձ)յան (մարտի 16, ժամը 22:40), նավասար(ձ)յան (փետրվարի 6, ժամը 12:15):

• Նույն պատճառով ԶԼՄ-ով -տ-ն արտասանում են -ծ, հատկապես եթերում շատ քիչ է հանդիպում այս նորմին համապատասխան ազգանունների ճշգրիտ արտասանություն, և ոչ միայն ազգանունների.

Հայրապե(ծ)յան, Սմբա(ծ)յան, Կարապե(ծ)յան..., առավո(ծ)յան (Շանթ հ/ը, փետրվարի 22, ժամը 10:35), ար(ծ)իստներին (մարտի 2, ժամը 10:10), Արարա(ծ)յան դաշտում (մարտի 22, ժամը 10:5), առավո(ծ)յան ուտել (փետրվարի 12, ժամը 10:35), արև(ծ)յան Վրաստան (մարտի 11, ժամը 22:20),

կոլեկ(ծ)իվ (Արմենիա հ/ը, փետրվարի 3, ժամը 11:5), դրամա(ծ)իկական (TV5 հ/ը, հունիսի 12, ժամը 17:15):

Բազմիցս գրվել և խոսվել է -ություն վերջածանցի -թ-ի փոխարեն սխալ -ց արտասանության մասին, սակայն այս սխալը դեռևս տիրապետող է հայկական եթերում՝ գործունեու(ց)յուն, կազմակերպու(ց)յուն, հնարավորու(ց)յուն (Դար 21 հ/ը, ապրիլի 12, ժամը 13:45), հասարակու(ց)յուն, հաջողու(ց)յուն, վարչու(ց)յուն, տնտեսու(ց)յուն, ժողովրդավարու(ց)յուն (Շանթ հ/ը, փետրվարի 12, ժամը 22:10):

4) Ձ-Ծ-Յ

-Ձ-ն արտասանվում է -ց հետևյալ դիրքերում՝

- ձայնավորից հետո՝ օձ-օ(ց),
- երբ ձ-ն հաջորդում է -ր-ին՝ վարձ-վար(ց), դարձ-դար(ց),
- որոշ բառերում նույն դիրքում -ձ-ն ունի երկակի արտասանություն,
- -դ-ից հետո, օրինակ՝ դեղձ-դե(յց), դաղձ- դա(յց):

5) Ջ-Ճ-Չ

-Ջ-ն արտասանվում է -չ այն դեպքում, երբ

- հաջորդում է ձայնավորին՝ քաջք-քա(չ)ք, ոջիլ-ո(չ)իլ,
- -ր և -ո ձայնորդներից հետո, օրինակ՝ թր(չ)ել, առ(չ)և, վեր(չ), ար(չ), բայց լուրջ, կամուրջ, մրջյուն և այլ բառերում կարդացվում է -ջ,
- -դ-ից հետո. օրինակ՝ ա(յւ)իկ, չ(յւ)իկ, ո(յւ)յ:

Ինչպես կարելի է նկատել՝ -բ, -գ, -դ, -ձ, -ջ բաղաձայններն ունեն արտասանական զուգաձևություններ: Տերմինաբանական կոմիտեի որոշմամբ նախընտրելի է սրանց արտասանության գրային տարբերակը: «Նկատի ունենալով հայերենի բաղաձայնների գրային արտասանության տարածման միտումը, ինչպես նաև լեզվի նորմավորման, ուղղախոսական և ուղղագրական սխալների վերացման համար արտասանությունը գրությանը մոտեցնելու նպատակահարմարությունը՝ ուսուցման և ուղիղ-հեռուստատեսային հաղորդումների ժամանակ նախապատվությունը տալ այդ բառերի գրային արտասանությանը»¹³: Այս նախագիծը կազմել է Հ. Բարսեղյանը և ընդունվել է տերմինաբանական կոմիտեի դեռևս 1969 թ. հուլիսի նիստում: Մերօրյա հեռավորությունից արժևորելով Տերմինաբանական կոմիտեի սույն որոշումը՝ պետք է նկատել, որ այն իր նպատակին իրավամբ ծառայել է: Այսօր գրական-խոսակցական լեզվում առավել տարածված են այս բառերի գրային արտասանությունները:

¹³ Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու. 1956-2006, էջ 197:

Ժամանակակից հայերենի գրական արտասանության օրինաչափությունն այն է, որ խուլ պայթական -պ, -տ, -կ, -թ, -ք և խուլ պայթաշփական -ծ, -ճ, -ջ բաղաձայն հնչյունները բոլոր դիրքերում մնում են անփոփոխ¹⁴:

6) Ղ-Խ

• -Ղ-ն ձայնեղ հնչյուններից՝ -բ, -գ, -դ, -ձ, -ջ-ից առաջ արտասանվում է -խ. օրինակ՝ աղբ, շաղգամ, խեղդել, դաղձ, աղջիկ.

• -Ղ-ն -խ է արտասանվում նաև խուլ հնչյուններից՝ -պ, -տ, -կ, -ց, -ջ-ից առաջ. օրինակ՝ պողպատ, ուղտ, ծաղկել, աղցան, գեղջ.

• -Ղ-ն թույլ -խ է հնչում նաև -փ, -թ, -ք շնչեղ խուլներից առաջ. օրինակ՝ հղփանալ, հաղթել, աղքատ:

Այսպիսով՝ կարելի է ասել, որ ուղղախոսական նորմերում կազմվեցին այնպիսի հնչյունակապակցություններ, որոնք գրությամբ և արտասանությամբ տարբեր են: Այստեղ հիմնականում տեղի է ունենում ձայնեղների խլացում, երբեմն էլ շնչեղացում, օրինակ՝ -ղբ-խպ, -ղդ-խթ, -ղգ-խք, -ղջ-խջ, -ղձ-խց և այլն:

7) Զ-Մ

Այս հնչյուններն ավելի հաճախ ուղղագրական դժվարություններ են առաջացնում, քանի որ հայերենի ուղղախոսությանը համապատասխանում է այս հնչյունների գրավոր արտասանությունը, այսինքն՝ ինչպես գրում, այնպես էլ արտասանում ենք: Զ-ս-ն հակադրվում են միմյանց ձայնեղությամբ և խլությամբ, մնացած արտասանական առանձնահատկություններով նման են, երկուսն էլ շփական են և առաջնալեզվային:

8) Ժ-Շ

Սրանք նույնպես հնչեղությամբ մոտ են իրար, տարբերվում են միմյանցից ձայնի պարունակությամբ՝ -Ժ-ն ձայնեղ է, -Շ-ն՝ խուլ, բայց երկուսն էլ առաջնալեզվային են և շփական: Ուղղախոսական խախտում է նկատվում այս երկու բաղաձայնների միասնական հանդես գալու դեպքում, որի ժամանակ մի հնչյունը սղվում է հաճախ:

9) Վ-Ֆ

-Վ-ֆ-ն կազմում են բաղաձայնների երկշարքը՝ ձայնեղներ և խուլեր: -Վ-ն արտասանվում է -ֆ փոխառյալ և ոչ փոխառյալ մի շարք բառերում, որոշ բառերում՝ ձայնավորից հետո, ինչպես նաև կարող ենք ասել, որ հանդիպում է նաև, երբ -ֆ-ն է հնչում -վ, սակայն սրանք խոսակցական լեզվում են ավելի հաճախ հնչում:

10) Ը-Ռ

¹⁴ Ասատրյան Մ., Արևելահայ գրական լեզվի պայթական բաղաձայնների արտասանությունը, 1976, էջ 45:

Այս ձայնորդներն ավելի շատ ձայն են պարունակում, քան աղմուկ: Երկուսն էլ շփական են և առաջնալեզվային: Շատ լեզուներում -ր և -ռ հնչույթները գրվում են մեկ տառով, սակայն հայերենում սրանք ունեն իմաստային հակադրություն՝ արու-առու, լուր-լուռ: Ռ-ն տարբերվում է -ր-ից թրթռուն և կոշտ լինելով: Գրական նորմին համապատասխանում է արտասանության գրային տարբերակը, հակառակ որի՝ խոսակցական լեզվում, ինչպես նաև հեռուստատեսություն երբեմն հնչում է ոչ գրային հնչումը. օրինակ՝ էնեոգիա (Շանթ հ/ը, փետրվարի 28, ժամը 21:35), Գեոմանիա (փետրվարի 6, ժամը 12:10):

Ուղղախոսական նորմերի համակարգում արտասանական դժվարություն է առաջացնում նաև -և-ը:

11) -Եվ-ը մեարայյան այբուբենի տառերից չէ, այն մեր այբուբեն է թափանցել XII դարից՝ -Ֆ-ի, -օ-ի հետ:

- -Եվ-ը երեք հնչույթների՝ յ+է+վ միասնություն է: Այն կատարում է թե՛ հնչյունի դեր, թե՛ բառի դեր՝ հանդես գալով որպես շաղկապ,

- -և տառը արտասանվում է -էվ, երբ հաջորդում է բաղաձայնին, օրինակ՝ ար(էվ), հար(էվ)ան,

- ձայնավորից հետո -և-ը հնչում է -յէվ. օրինակ՝ նա(յէվ), Սերգե(յէվ),

- կան բառեր, որոնց արտասանությունը տատանվում է. օրինակ՝ այլևս, դեռևս, թեպետև, պատճառն այն է, որ դրանք նախկինում գրվել են առանձին՝ այլ ևս, դեռ ևս, թեպետ և: Բայց արդի շրջանում արդեն սրանց տրվել է լուծում՝ պետք է արտասանել -էվ, ինչպես բոլոր այն բառերում, որտեղ -և-ը հաջորդում է բաղաձայնի:

Կրկնակ բաղաձայններ: Հայերենը չի սիրում բաղաձայնների կուտակում, թեև դրանք երբեմն հանդիպում են: Կրկնակ բաղաձայնները «հայկական բառերում հանդիպում են կամ ձայնավորի սղումով կազմված ձևերում, ինչպես՝ բջջահյուր (բջիջ բառից) և կամ երկու ձևերի սահմանագծում, այսինքն՝ բարդության և ածանցման, ինչպես նաև հապավման ժամանակ, օրինակ՝ երկկողմ, աննպաստ: ... Կարող է լինել և ձայնավորի անկումը կամ նույնանման վանկերից մեկի ամփոփումը, օրինակ՝ օրորան- օրրան»¹⁵:

Կրկնակ բաղաձայնները բառասկզբում, բառամիջում և բառավերջում.

- բառասկզբում կրկնակ բաղաձայնների արտասանության ժամանակ դրանց միջև լսվում է -ը հնչույթը, օրինակ՝ գ(ը)զվել, կ(ը)կոցել, գ(ը)զվել,

- բառամիջում կրկնակ բաղաձայններն արտասանվում են որոշ տևողությամբ՝ բալլադ, փթթել, ընդդեմ,

- բառավերջում՝ -ն-ով վերջացող բառի և -ներ հոգնակի մասնիկի միացումից՝ դասարաններ, սավաններ.

¹⁵ Ղարաբուլյան Թ., նշվ. աշխ., էջ 129:

• կրկնակ բաղաձայններ են նաև հետևյալ հնչյուններով՝ -բբ- արբա, -գգ- գգվել, -դդ- դդում, -ռռ- դռռալ, -սս- մասսա, -կկ- Բոկկաչո, -դդ- ուղղակի, -նն- քննել, -րր- բերրի, -լլ- Նելլի, -վվ- ապահովվել, -տտ- պտտաձող, -մմ- կազմման, էմմա, -ջջ- բջջի.

• -շ, -ժ, -գ, -ռ հնչյունների կրկնակ տարբերակները հաճախակի են բնաձայնական բառերում, որոնք արտասանվում են ընդգծված երկարությամբ, օրինակ՝ թշշալ, դժժալ, բզզալ, վշշալ, բռռալ և այլն:

Բառասկզբի, բառամիջի, բառավերջի երկու և ավելի բաղաձայնների արտասանական բարեհնչությունը ապահովում է -ը ձայնավորը, որի արտասանությունը համապատասխանում է վանկատման նորմերին. օրինակ՝ մ(ը)կ(ը)րտել, անն(ը)ման, ք(ը)նն(ը)վել, պատ(ը)շգամբ, ան(ը)զգույշ:

Նշենք նաև, որ գիտականորեն հաստատվել է, որ խոսքում ամենահաճախ հնչող ձայնավորն -ա-ն է, ապա՝ -է-ն, իսկ -ու-ն և -ը-ն հնչում են գրեթե հավասար: Բաղաձայններից ավելի հաճախ են հնչում -մ-ն, -ն-ն, -ր-ն, այնուհետև՝ -ս, -կ, -վ բաղաձայնները, իսկ վերջին տեղում -ֆ-ն է:

Ուղղախոսական նորմերը տարբեր են հայերեն բառերի, հին փոխառությունների և լեզու մտած նոր օտար բառերի համար: Ըստ Թ. Ղարազույյանի՝ այս խնդիրը հետևյալ կերպ է լուծվում. «Եթե օտար բառը հիմնավորապես մտել է հայոց լեզվի բառային հիմնական ֆոնդի մեջ, մերվել է լեզվին և յուրացվել ժողովրդի կողմից, ապա այդպիսի բառերը, անշուշտ, կարտասանվեն հայերենի արտասանական օրինաչափություններով: Իսկ եթե բառի օտար լինելը խիստ զգալի է, դրա հայկական ձևով արտասանությունը ստացվում է երբեմն շատ արհեստական...»¹⁶:

Վերը նշված ուղղախոսական նորմերի մի մասը մեզ է հասել ավանդական եղանակով՝ փոխանցվել է գրաբարից, մի մասը մշակվել է դարերի ընթացքում, որոշ մասն էլ դեռ մշակման փուլում է՝ խոսակցական լեզվից թափանցելով գրական լեզու: Գրական նորմերից ավելի արագ փոփոխվող նորմերը ուղղախոսական նորմերն են, այդ է պատճառը, որ այս կանոններում կան արտասանության տարբերակներ, որոնց ճշտությունը կորոշի ժամանակը:

Այսպիսով՝ կարելի է արձանագրել, որ արտասանական համակարգի նորմերը լիակատար միասնական չեն, քանի որ դրանք անընդհատ փոփոխվում են և զարգանում:

Ուղղախոսական նորմերը հնչյունների արտասանական առանձնահատկություններով և նրանց ճիշտ ու սխալ հնչման նորմերով չի սահմանափակվում: Լեզվում ուղիղ և ճիշտ խոսելու համար այլ կանոններ և այլ շեղումներ կան, որոնք կախված չեն հնչյունի տեսակից և դիրքից: Դրանք են բառի մեջ որևէ հնչյունի անկման դեպքերը մեկ այլ հնչյունի ազդեցությամբ կամ,

¹⁶ Նույն տեղում, էջ 67:

դրան հակառակ, մեկ այլ հնչյունի սխալ հավելումը: Խոսքում սխալ են արտասանում բառեր, որոնք սխալ հնչյունափոխության հետևանք են, ինչպես նաև խոսակցական լեզվում շատ հաճախ սխալ են հնչեցնում անկանոն կամ ածանցավոր բայերը, որը հայերենի քերականությանը լավ չտիրապետելու հետևանք է:

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ ОРФОЭПИЧЕСКИХ НОРМ АРМЯНСКОГО ЯЗЫКА

ВАРДАНЯН Н. Г.

Резюме

Нормирование языка посредством унификации в словарях, справочниках, грамматических пособиях имеет регулирующее действие в плане норм современного армянского языка.

Нормированием литературного языка формируются все сферы практического языка. Языковые нормы обеспечивают безупречное знание литературного языка, правописание и культуру речи, грамотное общение. Любое отклонение от языковых норм неверно и недопустимо.

Литературная норма отражается во всех структурных сферах языка: в правописании, орфоэпии, фонетике, словообразовании, орфографии, грамматике, независимо от воли и сознания носителя языка.